## Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի<<Քանաքեռավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի երաժշտություն (16 դասաժամ),դասվար (13 դասաժամ) , կենսաբանություն (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլը անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակված հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթի մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում /Ձև1/,
- 1լուսանկար՝ 3x4չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/,
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝/առկայության դեպքում/
- ինքնակենսագրություն /Ձև 5/
-այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 12-ից մինչև նոյեմբերի 25-ը ներառյալ,ամենօր՝ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 28-ին՝ ժամը 14:00-ին, Կոտայքի մարզի Քանաքեռավանի միջնակարգ դպրոցում, հասցեն՝Կոտայքի մարզ գ.Քանաքեռավան, 11-րդ փողոց, շենք 5:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 0224-6 -00 - 39 կամ 096 – 199-555 հեռախոսահամարներով: